ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ,,տարրական դասարանների դասվար, /20 դասաժամ/, ,,քիմիա,, /10 դասաժամ/, ,,ֆիզկուլտուրա,, /20 դասաժամ/ և ,,հայոց պատմություն,, /16 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև1)

-մեկ լուսանկար 3Х4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճենը /առկայության դեպքում/,

- ինքնակենսագրություն /ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-31-34-33 հեռախոսահամարով: